



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



M781 LI

L-2



ՈՒԻՏ
ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ

ԳՐԵԱՅ

Մ. Վ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏԻՊ

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԳԻ



ՅԵՐՈՒՍԱԳԵՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ

ԱԹՈՌՈՅ

Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՅ

—
1874

318-42

~~53504-wp~~

40640-68



Եկեալ կամաւ ՚ի մահ խաչին,
 վասն սիրոյ իւր դատհերին:

ՈՒԽՏ

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ

Ուխտաւք ինգրէի եւ իսկ
 ինքին նշոյ շինեչ ՚ի քրիս-
 տոս վասն եցբարց ինոց եւ
 ազգականոց ըստ մարմնոյ:

Պօղ. Հոռ. Թ. Ծ:

ՀԱՅՐԵՆԻՔ Լ Հայրենա-
 սիրութիւն, Ազգ և ազգաւ
 սիրութիւն՝ շատ սուրբա-
 կան բառեր գարձած են
 մեր խորհրդածութեց, խօ-
 սակցութեանց և գրուածոց
 մէջ: Եթէ բանաս այս վեր-
 ջին քանի մի տարուան Ազգ
 գային յիշատակարանները,
 ճառագրուիները, գրուստ-
 ները, թատերական հատ-

ուածները, նամականին և մինչև անգամ աշակերտաց դպրոցական շարագրածները, ամեն տեղ Հայրենասիրութիւն կը կարգաս, ամենու մէջ Ազգասիրութի կը լսես (1)։ Ո՛չ մի դար և ոչ

(1) Թեպէտ Հաջիւնասիրութիւն և Ազգասիրութիւն բառերու կազմութեանը նայելով՝ մէկը կը նշանակէ սէր առ Հայրենի երկիրն, և միւսն սէր առ Ազգն, բայց որովհետեւ երկուսն եւս անխորաքար իրարու տեղ գործ գրուած են և շատ անգամ միայն Հաջիւնասիրութիւն բառով հասկացուած է ևս Ազգասիրութիւն բառի իմաստը, ուստի մենք ևս մեր գրութեան մէջ իրարմէ չզղատցցինք, այլ շատ տեղ երկուսն ևս համանրման իմաստով գործ գրինք։ Մեր Ազգային օսկեղնիկ գրիչներէն մէկը — Եղիշէ վարդապետը — Հայրենաս

մի ժամանակ այնչափ չէն կրկնուեր Հայրենասիրութիւն և ազգասիրութիւն բառերը, ինչպէս ներկայ դարուս մէջ, և ոչ մի դար այնպէս ցաւակցութեան և սիրոյ կարօտ չէ եղած մեր Ազգը, ինչպէս ներկայիս մէջ։ Խօսքը իրականութե տեղ է բռներ, և ազգասիրութեան վերայ խօսիլը՝ բուն ազգասիրութե տեղ։ Իայց՝ ազգասիրութիւն իւր առանձին գծագիրն ունի և յատկանիշը, իւր առան-

սիրութիւն և Ազգասիրութիւն բառերու տեղ գործ գրած ունի — Սուրբ Նախնիք, ըստ որում Ազգ և Հայրենիք սուրբ են Հայրենասէր որտի համար։

ձին լեզուն և յատուկ նը-
 շանաբանը , իւր կատա-
 բումն և իւր արդիւնքը :
 Հաղարաւոր աղաղակներու
 մէջ՝ հայրենասիրութեան
 բարբառն յայտնի է , և բիւ-
 րաւոր դրօշներու մէջ՝ նու-
 րա խորհրդանշանը ակնե-
 րեւ . նորա լեզուն՝ Արար-
 առն է , և նորա պատկը՝ Նը-
 ղովքը . արտասուք ազգակ-
 ցաց համար , նզովք եղ-
 բարց համար : Այս լեզ-
 ուով խօսեր են բոլոր Հայ-
 րենասէրները , այս պատկով
 պատկուեր են ամեն ճշմա-
 րիտ ազգասէրները : Այս է
 նոցա ուխտը . « Ուխտիւք
 խնդրէի նզով լինել ՚ի Քը-

րիստոսէ վասն եղբարց ի-
 մոց եւ ազգականաց ըստ
 մարմնոյ » : Այս թնղ լինի
 և մեր համար ուխտ և նը-
 շանաբան :

Հայրենասիրութեան ըղ-
 փայմունքը ամեն տեղ և
 ամեն ժամանակ բնական
 և նուիրական զգայմունք
 է քարոզուած , և նորա զս-
 հը՝ Աստուծոյ և մարդկան
 հաճելի զոհ : Շատ մարդիկ
 այս սիրով վառուած՝ իրենց
 անձը զոհած են , և դարերը
 վկայած են որ Հայրենասի-
 րութիւնը ցնորք չէ և ոչ
 երեւակայութեան ճնունդ ,
 այլ ցոլմունք և ճառագայթ
 է այն նուիրական վառա-

րանին, ուր Նախասխնամու-
 թիւնը ամփոփած է մարդ-
 կային բոլոր բարի զգաց-
 մունքները : Այն տեղ, ուր
 է սէր գերգաստանի և սէր
 մարդկութեան, այն տեղ է
 նայնպէս և սէր Ազգի : Ազ-
 գասիրութիւնը զեղմունք
 է ընտանեկան սիրոյն, և
 մարդասիրութիւն՝ զեղմունք
 ազգասիրութեան : Այս
 երեքն եւս իրարմէ աղբե-
 րացած են և իրարու վրայ
 ամրացած : Ամեն կանոնա-
 ւոր և զգայուն սրտերու
 մէջ սիրոյ ճառագայթները
 կանոնաւոր կերպով ցրա-
 ցած են թէ՛ գերգաստանի,
 թէ՛ ազգի և թէ՛ մարդկու-

թեան վրայ : Բայց՝ Ասա-
 ուած, որ մեր սիրաը և կա-
 րողութիւնը գիտէ, այնպէս
 ստեղծած է զմեզ, որ ամեն
 բանի մէջ փոքրէն դէպ ՚ի
 մեծը գիմենք. մեր որդիքը
 սիրելով՝ ուսանինք սիրել
 մեր ազգակիցները, և ազ-
 գակիցները սիրելով՝ սի-
 րեմք զմարդիկ : Մեր ըն-
 տանիքը զարգացնէք մեր
 Հայրենեաց համար և մեր
 Հայրենիքը հանուր մարդ-
 կութեան համար : Երբ կը
 փափաքիմք բարիք առնել
 մարդկութեան մեր տա-
 ղանգով, հանձարով և ըս-
 տացուածքով, մատակա-
 րարութիւնը մեր հայրե-

նիքէն և ազգէն սիօնիք .
 վասն զի առանց ընտանե-
 կան սիրոյ՝ հայրենասիրու-
 թիւն չը կայ , և ոչ առանց
 հայրենասիրութեան՝ մար-
 դասիրութիւն . վասն զի
 ճշմարիտ դպրոց մարդասի-
 րութեան՝ հայրենասիրու-
 թիւնն է , և դպրոց հայրե-
 նասիրութե՛ն՝ ոգին ընտա-
 նեաց : Ուրեմն , ընտանե-
 կան երջանկութեան հա-
 մար ազգ կործանել , և կամ՝
 ազգային երջանկութեան
 համար՝ օտար ազգեր ոտ-
 նակոխ առնել , հրեշտական
 սկզբունք է այս , արտաքոյ
 բնական և աստուածային
 օրինաց : Նոյնպէս և ս մար-

դասէր ձևանալով ազգու-
 թիւն արհամարհել , և ազ-
 ցասիրութեան էութիւնն
 ուրանալ՝ կը նշանակէ ըն-
 տանկիքը ջնջել , որ մեր ո-
 բորանն ու գերեզմանն է
 և միանգամայն հայրենա-
 սիրութեան խանձարուրը :

Ս. յսպէս ահա , հայրե-
 նասիրութիւնն , որ ծնունդ
 է ընտանեկան սիրոյն եւ
 ծնող հանուր մարդասիրու-
 թեան , շարժառիթն է և
 մեր սրտի խորոց յուզման
 և առարկայ ներկայ գրու-
 թեան : Բայց յառաջ քան
 բացատրելն թէ ի՞նչ է հայ-
 րենասիրութիւն և ուխտ
 հայրենասիրին , տեսնենք

ամենէն առաջ թէ ի՞նչ է
Հայրենիք և ի՞նչ է Ազգ :

Հայրենիքն է մեր որո-
րանք և գերեզմանք, հայ-
րենակիցներն են մեր մար-
մինք և արիւնք : Հայրենիքն
է այն հասարակաց մայրը,
որոյ ծոցին մէջ ամենքը կը
ծնանին և կը զարգանան :
Իսկ Ազգն է այն հասարա-
կաց միութիւնը, ուր իրա-
րու հետ կը միանան ան-
հատները, օգուտները և
չահերը . և ամեն կեանքերէ
կը կազմուի ընդհանուր
կեանք, որ չըմբռանիր ան-
հատներու հետ, այլ կը
յարատուէ անընդհատ :
Այս ընդհանուր և յարա-

տու կեանքն է միայն, որ
կարող է անսպառելի բա-
րութեանց աղբիւր լինել,
յառաջադիմութեան ըս-
կզուէնքն, գարգացման ոյժ
ու պահպանութիւն և աղ-
գային մարմնոյ ապահովու-
թիւն ու երջանկութիւն :

Այս է հայրենեաց եւ
ազգի համառօտ գծագի-
րը, մտքի տուած բացատ-
րութեանը նայելով : Քայց
միթէ հայրենասէր սրտի
համար Ազգ և Հայրենիք
մեկնութիւն ունին և սահ-
ման . ո՛չ բնաւ : Մենք գի-
տենք որ հայրենիքէն ընդ-
արձակ ծովերով և ցամա-
քով բաժնուած հայրենա-

սիրի համար, կարծես թէ,
կենդանութեան կազմու-
րիչ տարերքը փոփոխուած
են, ոչ նորա լեզուն՝ նոյն
լեզուն է, ոչ մտքը՝ նոյն
մտքը, և ոչ սիրտը՝ նոյն
սիրտը: Մենք գիտենք որ
մենք կը սիրենք Հայրենիքը,
ինչպէս մեր կեանքը, և կը
սիրենք շատ բնականօրէն,
ինչպէս կը շնչենք օդը: Մենք
գիտենք որ ազգի վիշաք
մեզ կը վշտացնէ և բարե-
բաստութիւնը մեզ կ'ուրա-
խացնէ: Մենք գիտենք որ
հայրենասէրները ուրա-
խութեամբ կը մեռանին
Հայրենեաց եւ Ազգի հա-
մար: Բայց հայրենեաց դե-

ղեցիլութիւնն է արդեօք և
Ազգի երջանկութիւնը, զոր
մենք կը սիրենք. — ոչ ամե-
նեւին: Վասն զի որքան
ամայի է Հայրենիքը և հայ-
րենակցաց վիճակը թըշ-
ուառ, այնքան աւելի ըզ-
գալի են հայրենասէր սըր-
տին և այնքան աւելի սի-
րելի: Ուրեմն բուն իսկ
Հայրենիքն ու Ազգն են, որ
կը գրաւեն մեր սիրտը, և
ոչ թէ նոցա շքեղութիւնը
եւ վայելչութիւնը: Բայց
թէ ինչո՞ւ կը սիրենք Հայրե-
նիքը, և ինչո՞ւ սիրով կը մե-
ռանիմք Ազգի համար:
Հայրենասէր սրտերու մեջ
պէտք է որոնել այս հարց-

ման պատասխանը, վասն
 զի միտքը պատասխան չու-
 նի այս մասին : Ինչո՞ւ Յա-
 կոբ և Յովսէփ նահապետ-
 ները մահուան ժամանակ
 կ'երգուեցնեն իրենց որդի-
 քը՝ օտար հողէ հանել ի-
 րենց ոսկերքը եւ տանել
 թաղել հայրենեաց մէջ, ի-
 րենց հարց հետ : Ինչո՞ւ
 աստուածախօսն Մովսէս
 կենաց դարութենէն ջըն-
 ջուիլ կը խնդրէ իր ազգի
 համար, և ինչո՞ւ Պողոս կը
 փափաքի և կ'ուխտէ նորով
 լինիլ ՚ի Քրիստոսէ վասն
 եղբարց եւ ազգականաց :
 Ի՞նչ միտք և ի՞նչ հանձար
 կարող է մեկնել և համո-

ղել մեզ . բայց հայրենա-
 սէր սիրտը կը խանդաղա-
 աի և կը զգայ, որ արգա-
 ըեւ հայրենիքը քաղցր է
 նաև ոսկերաց համար եւ
 այնչափ մեծ է ազգն, որ
 մարդ ուրախութեամբ կը
 փափաքի նորով լինիլ նորա
 փառաց, բարօրութեան և
 կատարելութեան համար :
 Ուրեմն, այն սէրը, որ կը
 վառի մարդու սրտի մէջ
 իւր հայրենեաց և ազգի
 համար, այն սէրը բնական
 սէր է . բայց ՚ի հարկէ դաս-
 տիարակութիւնը եւ կրօ-
 թութիւնը մեծ ազդեցու-
 թիւն ունին նոյն սիրոյ զար-
 դացման եւ աճելութեան

համար: Ամեն մարդու սրբա-
տի մէջ բնականօրէն մի
ձգտումն կայ իւր հայրենա-
կան եւ ծննդական երկրի
համար, և մի համակրու-
թիւն իւր ազգակցաց եւ
հայրենակցաց համար: Քայց
դպայուն և կիրթ սրտերու
մէջ այս ձգտումն ու հա-
մակրութիւնը սրբուած զը-
տուած են եւ նուիրակա-
նութեան հասած: Հայ-
րենասիրութեան հուրը՝
մաքուր հոգիներու մէջ
որբազան հուր է և ազնիւ
հուր, որոյ արտաքին երե-
ւոյթները մեզ յայտնի են,
բայց ներքին ջերմութիւնը,
այն սքանչելի ելեբտրակա-

նութիւնը, որոյ հաղորդակ-
ցութիւնը սրտի և արեան
մէջ է, մեզ համար անմեկ-
նելի է: Զարգացիր օտա-
րութեան մէջ, մեծացիր
փարթամութեան մէջ, հե-
ռի հայրենիքէ, հեռի հայ-
րենակիցներէ, բայց ունե-
ցիր սիրտ, ունեցիր կրք-
թութիւն, և մի օր անշուշտ
սիրտդ պիտի թռթուայ,
աչքերդ պիտի պղտորին
արտասուներով, և հոգիդ
պիտի մղէ դքեզ հայրենիք
որոնք, ազգակիցներ խընդ-
րել, ճոխ ապարանքներէ
խուսափիլ եւ զեղբարբք
շրջիլ: «Անկաւ ՚ի սիրտ նո-
րա, կ'ասէ Ս. Գիրքը Մով-

սխի համար, շրջիլ զեղ-
 բարբբ, զորդւոլքն Իսրա-
 յելի: Թողաւ Մովսէս ֆա-
 րաւոնի արքայական պալա-
 տը, թագաւորական գեր-
 դաստանի որդեգրու թիւնը
 և ցանկացաւ իւր բեռնա-
 կիր եղբարց հիւղերուն այ-
 ցելու թիւն առնել, նոցա
 մէջ շրջիլ, նոցա հետ ապ-
 րիլ և նոցա հետ մեռնիլ.
 Կամիմք ասել, ջերմ սիրով
 սխաւ սիրել իւր արե-
 նակիցները: Վասն զի, սի-
 րել՝ կը նշանակէ ապրիլ,
 միայն անձը սիրել՝ կը նշա-
 նակէ անձի համար ապրիլ.
 միայն ընտանիք սիրել՝ կը
 նշանակէ ընտանեաց հա-

մար ապրիլ, և Ազգ սիրել՝
 կը նշանակէ ազգի համար
 ապրիլ: Ազգի սիրտը կը
 բաբախի ազգասիրի սրտի
 վրայ, և իւր սիրտը ազգի
 սրտի վրայ: Ազգասէրը կը
 շնչէ այն շունչը, ինչ որ
 կը շնչեն հայրենակիցքը.
 վասն զի մի աներեւոյթ
 շունչ կայ, որ մէկէն կ'անց-
 նի միւսին: Այս սիրային
 տուրեառութեան մէջ, այս
 համակեցութեան մէջ հայ-
 րենասէրը անձնաւորութի
 չունի, նորա ցաւը և մխի-
 թարութիւնը ազգի մէջ է:
 Նա ազգի հետ կը հիւան-
 գանայ, ազգի հետ կը տա-
 ւապի, և ազգի հետ կը

մխիթարի : Նորա սրտի խո-
րոց մէջ ձայն մի կայ , որ
միշտ կ'ազազակէ . « Ո՞րք ՚ի
ձէնջ հիւանդանայ և ես
ոչ հիւանդանամ » : Նա
սեպհականութիւն չունի ,
վասն զի նորա սիրար , բա-
զուկները , տքնութիւնը ,
վաստակը , հարստութիւ-
նը , կեանքը եւ աղօթքը ,
բոլորը ազգի համար են :
Եւ մի թէ այս միայն : —
Ո՛չ , ոչ , ազգի ցաւն զգալ ,
ազգի հետ վշտանալ եւ
ազգի հետ ուրախանալ ,
այս հայրենասիրութեան
գիւրին աստարէզն է : Այս
աւելի գերագոյնը , աւելի
սքանչելին , աւելի ծանրն

եւ փախաբերին , այսինքն
ազգի դառնութեան բա-
ժակը խմել , որ ազգի քիմ-
քը քաղցրանայ , ազգի յան-
ցանքը ապաշխարել և նո-
րա մեղաց համար մեռնիլ ,
որ ազգը ներողութեան
արժանանայ , ազգի համար
ջնջուիլ յերկրէ և երկիքէ ,
որ ազգը երկիր և երկինք
ունենայ , ազգի համար նը-
զով լինիլ , որ ազգը օրհ-
նութեմ արժանանայ : Այս
տեղ է ահա հայրենասի-
րութեան նուիրական կա-
տարը , այս տեղ է հայրե-
նասիրի ուխտը , և այս էր
որ սրայման կը դնէր Մով-
սէս և կը սրազատէր « Աղա-

չեմ դքեզ, Տէր, եթէ թու
 զուս զմեզս ժողովրդեան,
 թնղ, ապա թէ ոչ ջնջեա
 զիս 'ի դպրութենէ քում
 մէ, յոր գրեցեր ո՞. (Նլնց.
 1, Բ. 22.) Այս ցաւով եւ
 հեծութեամբ կ'ուխտէր
 Պօղոս. « Աւխտիւք խնդրէի
 նզով լինիլ 'ի Քրիստոսէ
 վասն ազգականաց իմոց և
 եղբարց ու Այսպէս կը փա
 փաքէր և Երեմիաս, որ իւր
 գլուխը ծով դառնաց եւ
 աչքերը արտասուաց աղ
 բիւր՝ իւր ազգի փոխարէն
 լալու. « Ո՞ տայր զգլուխ
 իմ 'ի ջուր, եւ զաչս իմ
 յաղբիւրս արտասուաց,
 զի նստէի եւ լայի զմեզս

ժողովրդեան իմոց ու Այս
 է հայրենասէրներու ուխ
 տը. այսպէս ուխտած են
 հին և նոր Աւխտի աննման
 սրատգամախօսները : Այս
 լեզուով խօսած են մարդ
 կային ազգի սրատմագրու
 թեան մէջ եղած բոլոր
 ճշմարիտ ժողովրդասէրնե
 րը, ազգասէրները և մար
 դասէրները : Չափազանց
 սիրողները չափազանց վըշ
 տեր կրած են, ոմանք նը
 զուած ու մտանուած են,
 ոմանք տանջուած և չար
 չարուած են, եւ շատերը
 իրենց կեանքը ուրիշներու
 կենաց համար զոհած են :
 Սէրը անիծից և նախաաւ

նաց խաչի վրայ բարձրացուց այն երկնային Մարդասէրը, որոյ սիրտը բոլոր մարդկութեան սրտի վրայ էր, եւ բովանդակ մարդկութեան սիրտը՝ իւր սրտին վրայ, այն սրտին վրայ, որով հիւանդ աղագերը կ'ոգեւորին եւ կը կենդանանան եւ ճնշեալ ժողովուրդները կ'ազատին եւ կը զօրանան: Երանի՜ ժողովրդին, որ չըհնգանար այս փրկարար սրտէն: Նա անբուժելի թշուառութի չունենար երբէք, և ոչ մըջ տընջենաւոր գերութիւն: Սէրը դատապարտեց անաման հայրենասէր Մովսէսը

չը մտնել Աւետեաց երկիրը. «Յանդիման տեսցես զերկիրն, և անգը մի՛ մտանիցես»: Սէրը դատապարտեց Պողոսը իր հայրենի յուսոյ համար ծանր շղջութաներ կրել. «Վասն յուսոյն Իսրայելի կամ 'ի շղջութայս» (Գործ. ԻԷ. 20): Սիրով շնաչխարհիկն եւ սուրբն Գրիգոր խորխորատըն իջաւ, և Տրդատ ու Ներսէս դառնութե՛ թիւնալից բաժակը քամեցին, իսկ սուրբ Վարդանանք և Աւետնդեանք իրենց անձը զոհեցին. վասն զի ճշմարիտ սէրը առանց զոհի չէ: Արգարեւ՝ հայրենասիրութիւնը

այնչափ բնական է , որ
մենք հեթանոսական դա-
րուց օրինակներ եւս կա-
րող ենք յառաջ բերել ,
ինչպէս են կողբոս (1) . Դե-

(1) Կողբոս վերջին թաղաւոր Ա-
թենացւոց : Սա թաղաւորելով 1160
—1152 թուականին նախ քան ըզ-
ֆրիստոս , երբ Աթենացիք և Գօրի-
ացիք իրարու դէմ կը պատերազմե-
ին , պատգամախօսէն լեց որ այն
կողմը յաղթող պիտի դռնուի որոյ
թաղաւորը զոհուի : Ազատութեամբ
զոհեց սա իւր անծը իւր ազգի հա-
մար և Աթենացիք յաղթող հան-
դիսացան : Այնչափ տալաւորութիւն
ազդեց այս անձնազոհութիւնը , որ
Աթենացիք արժան չը համարեցին
ուրիշ մէկը նորա տեղ թաղաւոր
զնել , և այսպէս վերջացուցին ի-
րենց թաղաւորութիւնը :

յիուս — Մուս (1) և այլք ,
բայց ըզձալի է մեզ մա-
նաւանդ այն հայրենաով-
րութիւնը , որոյ երկրաւոր
մասունքները զտուած են
երկնային սիրով , որոյ ա-
ռարկան է մանաւանդ աղ-
գի բարոյական կենդանու-

(1) Դեշիոս — Մուս էր հիւպատոս
Հուովմայեցւոց (545 տարի Քրիստո-
սէն առաջ) որ ազատեց Կուռնելի-
ոս կասը Մամիսացւոց պատերազմին
մէջ : Իսկ երկու տարիէն յետոյ
Դատինացւոց դէմ ունեցած պատե-
րազմին մէջ իւր անծը զոհեց որ
յաղթութիւն պարգեւէ Հուովմա-
յեցւոց : Անվէհեր վաղեց դէպ 'ի
թշնամեաց բանակը և սպանուե-
ցաւ , որով և Հուովմայեցիք յաղ-
թող դտան :

Թիւնը, կատարելութիւնը
 և լուսաւորութիւնը, եւ
 որոյ հիմնաքարն է Քրիստոս
 նէութեան աղատարար և
 անյաղթ ոգին: Այս տե-
 սակ հայրենասիրութիւնն
 է որ կը խորտակէ ժողովը-
 դեան շղթաները եւ հայ-
 րենիքը կ'ազատէ ասպակա-
 նութենէ: Թո՛ղ համախորժ
 բին ընտանիքներ, թո՛ղ
 գումարին ժողովուրդներ,
 և թո՛ղ շինուին քաղաքներ,
 այս ամենը մեղուի և մըր-
 ջունի աշխատանք է: Բայց
 թո՛ղ իրաւունքը հաստատ-
 ուի, արդարութիւնը թա-
 քաւորէ, լուսաւորութի՛ր
 ծառայի, — ահա՛ մարդու

աշխատանք, ահա ճշմա-
 րիտ հայրենասիրի բաղ-
 ճանք: Վասն զի, այս վսե-
 մական գաղափարը կը ծը-
 նանի մարդկութեան հա-
 մար՝ Պղատոն, Սոկրատ,
 Քալիլէ եւ Նեվտոն. իսկ
 վայրենութիւնը և տիրա-
 սլետութեան ահուելի կիր-
 քը կը ծնանի Չինգիսխան-
 ներ եւ Ղենկթիմուրներ:
 Վասն զի, ինչպէս կատա-
 րեալ մարդը՝ նոյնպէս եւ
 կատարեալ հայրենասէրը
 լուսաւորութեան գագա-
 թին պէտք է որ երեւին:

Ճշմարիտ հայրենասէր-
 ները և ժողովրդասէրները
 իրենց ազատութի՛ր մատ-

նած են և կեանքը զոհած,
 որպէս զի ազգը և ժողո-
 վուրդը կեանք և անունդ
 ունենայ արդարութեամբ
 և տգատութեամբ. վասն
 զի, արդարութիւնը ժո-
 ղովորդի հունձն է և հացը.
 իսկ ազատութիւնը՝ նորա
 հարստութիւնը, հանգըս-
 տութիւնը և փառքը: Վա-
 սն զի, կեանքն ուտել խը-
 մելը չէ, այլ բանական կա-
 տարելութիւնը, առանց
 որոյ չկայ մարդկութիւն,
 չըկայ և ազգութիւն: Աթէ
 կեանքը զոհելը դիւրին է
 ազգասիրի համար, կարծիք
 չըկայ որ իւր գոյքը զոհե-
 լը աղբի օգտի համար՝ ևս

առաւել դիւրին է:

Հայրենասէրները շատ
 անգամ ապերախտութեան
 հանդիսած են իրենց սի-
 րած ազգի կողմէն եւ կը
 հանդիպին. բայց ոչ ապե-
 րախտութեան վրէժխնդիր
 են, ոչ տրտունջներէ կը
 վշտանան և ոչ բանտէ ու
 կախաղանէ կը զարհուրին:
 Մովսէս կենաց դպրութե-
 նէն կը խնդրէ ջնջուիլ այն
 ժողովորդի համար, որ ան-
 թիւ ապերախտութիւններ
 եւ թշնամանքներ յարոյց
 նորա դէմ, նախատեց,
 յանդիմանեց եւ դառնա-
 ցոյց: Պօղոս կը խնդրէ նը-
 ղով լինիլ այն ազգի որդ-

ւոյ համար, « Որք նղովիւք
 նղովեցին զանձինս, ոչ ու-
 տել և ոչ ըմպել, մինչև
 սպանցեն զՊօղոս » . (Գործ .
 ԻԳ . 14) : Շատ հայրենա-
 սէրներ գերեզման անգամ
 չունին այն հայրենեաց մէջ .
 զոր կը սիրեն և որոյ հա-
 մար իրենց անձը կը զոհեն .
 « Եւ ոչ որ գիտաց զգե-
 րեզման նորա (Մովսիսի)
 մինչև ցայսօր » . (Օրին . 1, Դ) :
 Շատերու անունն անգամ
 քերել ջանացած են այն
 աղբի մէջէն , որոյ սիրոյ
 համար խնդրած են նղով
 լինիլ . « Բարձ 'ի մէնջ, բարձ
 'ի մէնջ, բարձ զգա » . (Գործ .
 ԻԱ . 36) : Ժողովուրդը շատ

անգամ մղած , մերժած և
 հեռացուցած է այն աննը-
 ման հոգիները , որոնք ան-
 քակ կապով կապուած են
 եղեր ժողովուրդի հետ , և չէ
 կամեցեր նուիրական հայ-
 րենիքէն մի բուռն հող
 անգամ տալ նոցա՝ թալ-
 ուելու համար :

Հայրենասէրները հայ-
 րենիքը սիրեր են նոյն իսկ
 հայրենակցաց համար , եւ
 աղքը սիրեր են նոյն իսկ
 աղբի համար . իսկ իրենց
 բաժինն եղեր է նղովք և
 ապերախտութիւն , զոր, ա-
 ռանց նեղանալու , սիրով
 խնդրեր և ընդուներ են :
 Այս է ահա՛ ոչ միայն ժու

զովլըգասէրնեբու և աղգա-
 սէրնեբու վարձը , այլ և
 մարդկային աղգի ամեն նը-
 շանաւոր բարեբարնեբու :
 Մինչեւ որ նոքա չեն նըզով-
 ուեր և չեն զոհուեր բան-
 տի մէջ , պատերազմի մէջ ,
 կախաղանի վրայ , խարուկի
 վրայ , նոցա սէրը իւր լը-
 րութեան չի հասեր : Վասն
 զի , նոքա այն նուիրական
 շին են , որոնք մինչեւ չը
 բեկուին , բովանդակ անու-
 շահոտութիւն չը ծաւալիր
 ժողովրդի վրայ , աղգի վրայ
 և մարդկութեան վրայ : Մարդ-
 կութիւնը շատ անգամ
 արձաններ կը կանգնէ այն
 անձանց համար , որոնք ժո-

զովլըգը կը մորթեն . եւ
 ընդհակառակն՝ կախաղան
 կը պատրաստէ այն անձանց
 համար , որոնք ժողովրդի
 սիրով կը տոչորին : Շատ
 ուշ միայն ժողովրդը կը
 զգայ և կ'արտասուէ իւր
 իսկական բարեբարնեբու
 համար , և այս է ժողովրդ-
 գասէրնեբու կամ աղգա-
 սէրնեբու անեղծ փառքը
 եւ անմահ յաղթանակը :
 Սակայն , սխտի խոստովա-
 նինք որ աստեբախտութիւն
 ամեն ժամանակ ուղղակի
 ժողովրդէն չը բղխէր աղ-
 գասէրնեբու դէմ , այլ տե-
 սակ մի անձնապաշտ , չա-
 բական և վայրենամիտ ան-

ձերէ, որոնք երբեմն իբրեւ
 ժանտախտ կը վարա-
 կեն ժողովրդի սիրտը, միտ-
 քը և իր բարերարներու
 դէմ կը գրգռեն: Այս տե-
 սակ անձինքը միութեան
 բաժանարարներ են: Այս ան-
 ղի մարդը միացած է ըն-
 տանեաց հետ, ազգի հետ
 եւ մարդկութեան հետ: **Միութեան**
 մէջ է ամբու-
 թիւնը, զոր վերութեան
 և ստրկութեան երկաթնե-
 րը կարող չեն խորտակել.
 միաբանութե մէջ է նոյն-
 պէս փոխադարձ օժանդա-
 կութիւնը և կեանքը: Հե-
 տեւապէս միացածը բա-
 ժանել կը նշանակէ սատա-

նայի գործ գործել խի մի-
 սցածը հալածել, հարստա-
 հարել և մահացնել, ինչ
 անուն կարէ ունենալ այս
 ստրտախելի գործողութիւնը:
Սակայն, զգայուն սրտերը
 հեծութեամբ կը տեսնեն
 շատ անգամ, որ եղբայր
 եղբօր, աղբ աղբի շղթա-
 ներ դարբնած ունի. կը
 տեսնեն փոխանակ օգնա-
 կանութե՝ սրբապիղծ հա-
 ըրստահարութիւն, և փո-
 խանակ Ֆրիստոսի քաղցր
 եւ մարդասէր սրտիւրիմ
 Ապէնի ուրուականը:

Եւ երբ այս չարեաց
 աղբիւրը կը հետադռտեն,
 կը նշմարեն ակներեւ, սք

այս ամենը տգիտութենէ
եւ անկրթութենէ յառա-
ջացած են և մարդոց ու
ազգաց փոխադարձ պար-
տուց անկատարութենէն :
Վասն զի, ամեն անհատ
պարտք ունի իւր ազգին
օգնելու, և իւրաքանչիւր
ազգ պարտք ունի մարդ-
կութեան օգնելու :

Որովհետեւ, ինչպէս
անհատները ազգութեան
անդամ են, նոյնպէս և իւ-
րաքանչիւր ազգ անդամ է
հանուր մարդկութեան :
Ինչպէս ամեն անհատ պար-
տական է իւր ազգի իրա-
ւունքը և արդարութիւնը
պաշտպանել, նոյնպէս ամեն

ազգ պարտական է ազգաց
իրաւունքը վերականգնել,
եթէ յափշտակուած են :
Վասն զի, իրաւունք պաշտ-
պանել՝ կը նշանակէ հանուր
մարդկութե՛ն բարերարել :
Միլիտատէս Մարաթոնի
մէջ, Լէոնիգաս՝ Թերմո-
պիլէի, Թեմիստոկլէս՝ Սա-
լամինի և Վարդան՝ Շա-
ւարշանի մէջ, հայրենի ի-
րաւանց համար պատե-
րազմելով՝ կը պատերազ-
մէին մարդկային ազգի ա-
պագայի համար : Այն ազ-
գը, որ անտարբերութեամբ
կը նայի իր դրացի ազգի
ճնշմանը եւ հարստահա-
րութեանը վրայ, նա ինքը

իր համար փոս կը փորէ ,
 ուր անպատճառ օր մի պի-
 տի թաղուի : Իսկ այն ազ-
 գը , որ ինքը արդէն իւր
 օգտի համար անտարբեր
 է , նա մի փոտած մարմին է
 մարդկութեան մէջ , որ ա-
 ւելի լաւ է չորս կողմը պատ-
 քաշել , քան թէ թողուլ
 որ իւր հօտը տարածուի
 և ուրիշները ևս մահացնէ :
 Թէ ինչու մեր նիւթէն հե-
 աանալով այս ազգաց հա-
 մեմատու ինները յառաջ կը
 բերենք , ապահով եմք , որ
 մտադիր ընթերցողները կը
 հասկանան մեր նպատակը :
 Մեր նպատակը այնքան
 տրամաբանել չէ , որքան

ջերմացնել , վասն զի մեր
 առարկան Սէրն է , որ ջեր-
 մութեամբ զգալի կը լինի ,
 քան թէ տրամաբանու-
 թեամբ : Ազգաց պարտուց
 և վիճակի վրայ խօսելով՝
 կամխմբ ցոյց տալ հայրե-
 նասիրի զգացման ամենա-
 վերին կէտը , եւ սլատկե-
 րացնել թէ ի՞նչ ծանր վըշ-
 տակրութեան տակ է նորա
 փափուկ սիրտը , երբ սր-
 տին համապատասխան չէ
 իւր հայրենեաց և հայրե-
 նակցաց վիճակը :

Այն հայրենասէր սիր-
 տը , այն ազգասէր թա-
 փանցիկ աչքը , որ կը զգայ
 և կը տեսնէ թէ իւր ազգը

ոչ միայն ընդհանուր մարդ-
 կութեան օգնելու կարո-
 ղութիւն չունի, այլ և իր
 օգտին անգամ անտարբեր
 է, և ազգաց մէջ խեղա-
 թիւր անդամալոյծ մի հա-
 մարուած է: Այն սիրտը,
 որ գրկած ունի իւր հայ-
 բենիքը, իւր բոլոր ազգը
 և նորա վիշտն ու տառա-
 պանքը, այն սրտի նման
 ծանր բան չը կայ աշխար-
 հիս վրայ: Նա ոչ իշխա-
 նական խրախճանութեանց
 մէջ ուրախութիւնն ունի,
 և ոչ թագաւորական հան-
 դիսից ժամանակ բերկ-
 րանք: «Ընդէր արտուամ
 և տխուր են երեսք քո»,

կը հարցնէ Արտաշէս Պար-
 սից թագաւորը իւր տա-
 կարապետ Նէեմի խրայե-
 լացւոյն: «Զիսորդ ոչ տրւ
 տում և տխուր լիցին ե-
 րեսք իմ, կը սլատասխանէ
 Նէեմի, վասն զի քաղաքն
 և տուն հօր իմոյ անապաս-
 է և դրոււնքն ապականեալ
 ՚ի հրոյ»: Ի՞նչ է ուրեմն
 բաղձանքդ, վերատին կը
 հարցնէ թագաւորն: Նէ-
 եմիի սիրտը կը բաբախի,
 մտքը կը յուզի, կը դող-
 գողայ սաստիկ այլայլու-
 թենէն, և կը խնդրէ իւր
 հայրենիքը դառնալ, որ
 թէյուէտ աւերուած ու այ-
 բուած էր, բայց քաղցր էր

իր համար : Կը սպաղաստէ
Նէեմի . « Տէր , եթէ եգիտ
ժառայ քո շնորհս առաջի
երեսաց քոյ և կամիս՝ յղեա
զիս 'ի Հրէաստան , 'ի քա
ղաքս յիշատակարանաց
հարցն իմոց » . եւ երբ կը
կատարուի խնդիրը , կար
ծես թէ ծանր արտմուծե
ճմլեցուցիչ ասպառաժ վե
մը կը ցնդի կուրծքի վրա .
յէն իբրեւ ամենաթեթեւ
գոլորշի :

Այն հայրենասէրը , որ
կը տեսնէ իւր հայրենիքը
աւերակ , քաղաքները հիմ
նայատակ , նուիրական տա
ճարները փլեալ , նախա
հարց գերեզմանները կո

խան օտարաց , և յիշատա
կարանները ու փառքը եղ
ծուած , միթէ չաղաղակէր
խորին թախծութեամբ ,
ինչպէս Նէեմին . « Զիարդ
ոչ տրտում և տխուր լիցին
երեսք իմ . վասն զի քաղաքն
և տունն հօր իմոյ անասպա
տէ , և գրունքն ասպականեալ
'ի հրոյ » :

Այն սրտացած ազգա
սէրը , որ լոյս և բարոյա
կանութիւն կը քարոզէ և
Աւետեաց երկիր ու ազա
տութիւն կ'աղաղակէ , եւ
կը տեսնէ որ իւր ժողո
վուրդը դարձեալ գերու
թիւն ու Եգիպտոս կը սի
րէ եւ բեռնակրութեան

ու խաւարի կը փափաքի ,
 ցանկալով ձի և ջորի լինել ,
 քան թէ մարդ , այն տագ-
 նապետը ազգասէրը՝ ինչ-
 պէս չը կրկնէր . « Տէր , ե-
 թէ թողուս զձեզս ժողո-
 վըրդեան իմոյ , թնոյ , ապա
 թէ ոչ ջնջեա զիս ՚ի դըդ-
 րութենէ կենաց » :

Այն ազգասէրը , որ կը
 տեսնէ իւր եղբարքը եւ
 ազգականիքը մոլորուած ոչ
 խարներու նման ցրուած ,
 անտուն , անօգնական , ըն-
 տանեկան և հայրենական
 մխիթարութենէ զրկուած ,
 մոխիրը իրենց համար հաց
 դարձած , և իրենց ըմպե-
 լին քրտամբք և արտա-

ուօք խառնուած , յերկրէ
 երկիր թափառական , ի-
 րենց անունը և յիշատակը
 մոռցած , այն վշտաչարչար
 ազգասէրը ինչպէս չուխ-
 տէր . « Աւխտիւք ինզրէի
 նդով լինիլ ՚ի Քրիստոսէ
 վասն ազգականաց իմոց և
 եղբարց » :

Այն ժողովրդասէրը ,
 որ կը տեսնէ թէ իւր ժո-
 դովուրդը գոնէ այնչափ չը
 սիրէր իրաւունքը , արդա-
 րութիւնը և աղատութիւ-
 նը , որչափ մշակը կը սիրէ
 հունձը , արուեստաւորը՝
 օրական հացը , վաճառա-
 կանը՝ հարստութիւնը , նա-
 ւաստին հանգստութիւնը

եւ զինուորը՝ փառքը, որ
գոնէ նիւթականի չափ չը
մտածէր իւր բարոյական
արժանաւորութե՛ն վըայայլ
տեսակ մի անասնական ու
բուսական կեանք կը վարէ.
կը հարկանեն՝ չը զգար, կը
շարժեն՝ չը շարժիր, աչք
ունի՝ չը տեսնէր, և ականջ
ունի չը լսէր, ի՛նչ կարող
է ուխտել այս ամենը տես
նող և զգացող ժողովրդա-
սէրը, եթէ ոչ իւր գոյքը
եւ կեանքը զո՛հել, միայն
թէ իւր ժողովուրդը զարթ-
նու, կենդանանայ և իբրև
մարդ ապրի մարդկութեան
մէջ:

Այն ազգասէրը, որ կը

տեսնէ իւր ազգային մար-
մինը տկար և գունաթափ,
վէրքերը հագած որպէս
զգեստ, կենդանարար փայ-
լը աչքերէն շիջած և ծուն-
կերը կթուցեալ, միթէ չը
հարցնէր. — արդեօք այս իմ՝
մարմինն է և սպտկերը,
արդեօք այս վէրքերս փա-
թաթող ձեռք չը կայ, ար-
գեօք այս շիջած տեսու-
թեանը լոյս տուող չը կայ.
արդեօք միշտ ծարաւ ժա-
մանակը լեղև եւ քացա՛խ
պիտի արբուցանեն: Ա՛հ,
եթէ այսպէս է, կ'ուխտեմ
նղովուիլ, կ'ուխտեմ զո՛հ-
ուիլ, և թո՛ղ ապրի այս
տառապեալը:

Այն ազգասէրը, որ կը տեսնէ ամեն օր հազարաւոր քրտնաթոր բեռնակիրներ, որոց կեանքը ըստուերի նման կ'անցնի. կը տեսնէ հարիւրաւոր ընտանիքներ, որոնք տառապանաց մէջ կը հեծեն եւ կը մաշին. կը տեսնէ հազարաւոր մանուկներ, անպատասխարան անուամուկներ, որոնք թշուառութե մէջ կ'աճին, թշուառութեան մէջ կը թառամին, ծառայ կը ճնանին, ծառայ կը մեռանին. երբ իւր միջոցաւոր ազգակցաց այս փտուր պատկերը կը տեսնէ եւ կը զննէ, ի՞նչպէս կարէ չմտն

կըտալ եւ չաղաղակել. «Ո՛չ աստքէն մարմինք եղբարց մերոց մարմինք մեր են, եւ որդիք նոցա՝ որդիք մեր. եւ արդ՝ ընդէ՞ր տուսք զորդիս մեր ՚ի ծառայութիւն, եւ դատերք մեր վարեալ են ՚ի բռնութիւն » . (Նէե՛՛. Ե. 5) :

Այն հայրենասէրը, երբ կը տեսնէ մանաւանդ, որ թէ օտարներէն, եւ թէ իր ազգակիցներու մէջ կան մարդիկ, որոնք ժողովրդի տառապանաց ժամանակ հանգիստ են, որոնք ժողովըրդի ողբալու ժամանակ իրենք կը ծիծաղին, որոնք փոխանակ ժողովուրդը տա-

և ատրանաց տղմէն հանե-
 լըւ՝ աւելի կը խորատուղեն,
 որոնք ազգի վերաւոր գի-
 ակաները կը գիլեն, և այն
 բարձրութեան վրայ իրենց
 աթոռը կը դնեն. այն հայ-
 բենասէրը, որ կը դիտէ թէ
 սոյն օրինակ որդունք կան,
 որոնք ազգային վերաւոր
 մարմինը կը կրծեն և արիւ-
 նը կը ծծեն, որոց աչքը
 արատաւք չաւնի և սիրտը
 պողովատ է, որոնք իրենց
 անձին կը զոհեն հազարա-
 ւոր եղբայրներ. ճշմարիտ
 կ'ասեմ, որ այս ազգաս-
 պանութեան ահռելի տե-
 սարանը նկատող ազգա-
 սէրը կենդանի զոհ մի է,

որ հանապազ կը տոչորի և
 կը ճենճերի սրտով, մտա-
 ծութեամբ և անպատում
 թախծութեամբ :

Այսպէս ահա, երբ
 քերտը, արատաւքը, մեր-
 կութիւնը, ստրկութիւնը
 եւ տգիտութիւնը բաժին
 են հայրենակցաց, հայրե-
 նասիրի բաժինն է նղովք,
 նորա ուխտն է նղովք,
 նղովք անձին իւր եղբարց
 իրաւանց, բարօրութեան
 և կենդանութեան համար :
Այս է ազգասէրներու
 ուխտը, և այսպէս՝ Ազգի
 սէրը կը վառէ և կը սպա-
 ուէ նոցա կեանքը, ինչպէս
 այն նուիրական հուրը, որ

Ի հնումն կ'այրէր զոհը և
 ողջակէզը : Այս ուխտն էր
 մեր բնաբանը , այս թո՛ղ
 լինի և մեր նշանաբանը .
 « Աւխտիւք խնդրէի ես խկ
 խնքնին նզով լինիլ ՚ի Քրիստոս
 աստէ վասն եղբարց իմոց
 և ազգականաց ըստ մար
 մնոց » :



ՅԱՆԿ Գ ՐՈՅ

Տղագրեալ ՚ի վասն Սրբոց

Յակոբեանց * :

—*—*—

Ագնէս Հայ . գրով և Տաճ . լեզուաւ :
 Աղօթագիրք Սրբազան տեղեաց .
 աշխարհիկ լեզուաւ , յօրինեալ
 բարեպաշտ ուխտաւորաց համար .

Պարիւտարդ :

Անուրջք ՚ի Սիօն :

Առաքինութեան ճամբան , կամ

Մենտոր մանկանց :

Աւետարան Ատենի :

Աւետարան Ճաշու .

Աւետարան առ ձեռն :

Բանաստուծիւն Աշակերտուհեաց

մէջ . Բ . Կիւ . 1874 :

Բարոյական պատմութիւններ :

Բացաբութիւն Հրատարման եւ

Չղջման և առաւօտեան երգոց

Շնորհալոյն :

* Աստուծոյ լեզու գրեւոր հարստագիտութիւն :

Գաղիկ արքայ Հայոց :
 Գործք Առաքելաց :
 Գործ սակեղնիկ Սամուէլ Ռարբի
 հրէի , աշխարհիկ լեղուաւ :
 Գովասանք , նոր րիւ :
 Եղիշէ :
 Երեւոյթ կրիւ :
 Երկու խօսք Եկեղեցակա . համար :
 Եփրեմ խաւրին . Ե . րիւ :
 Չանաղանութիւն հինգ դարուց :
 պատմութիւն հին և նոր կտակա-
 րանաց , Տաճկերէն լեղուաւ , Պօ-
 ղոս Պատրիարքի . երեք հատորը
 մէկտեղ :
 Ընդհանրական :
 Թանգարան իրատու՝ Պօղոս Պատ-
 րիարքի . Գ . րիւ :
 Թափօրի տետրակ՝ Տարէլիան : Սուրբ
 Յարութեան Տաճարին մէջ կա-
 տարուած Թափօրներու արարու-
 ղութիւններուն վրայ :
 — Նոյնն՝ Էաբախիան :
 Թափօրի տետրակ . Ս . Յակոբայ Ե-
 կեղեցւոյ մէջ կատարուած Թա-
 փօրներուն :

Թուարանութիւն :
 Ժամագիրք . խաղաղիւր :
 Ժամագիրք Ատենի :
 Խնդիր Սրբազան տեղեաց (**):
 Խորհրդածութիւն Սրբազան Պա-
 տարագի , արարեալ սրբոյն Ներ-
 սէսի Լաբրոնացւոյ :
 Խորհրդատետր Սրբոյ Պատարագի :
 Կարգադրութիւն աւսողութեան :
 Կենսագրութիւն Բասթալայ , աշ-
 խարհիկ լեղուաւ * :
 Կտակագիր հոգեշահ բանից :
 Կրթարան Աւետարանական բանից .
 " Սամարացին ,
 " Սիմոն Պետրոս :
 " Որդիք Աստուծոյ :
 Համապատուութի յԲ . Առաքելաց ,
 հանդերձ յաւելուածով . Գ . րիւ :
 Համառօտութիւն Գրիստոնէական :
 Հայելի վիրաց . չափաբերութիւն
 Եօթն մահացու մեղաց վրայ * :
 Հեգերէն , խաղաղիւր :
 Հերթիկոս և Մարիամ : վէպ կրթա-
 կան՝ աշխարհիկ լեղուաւ :

Հրահանգ սիրոյ :
 Ղերուքնա եղեսացիս Եսայի կա-
 թուղիկոս Աղուանից :
 Ճաշոց գիրք :
 Ճառ հաղորդութեան :
 Ճառք դպրոցական :
 Ճարտասանութիւն առձեռն :
 Մատենագրութիւն նախնեաց :
 Մատթէոս Ուռհայեցի , հանգերձ
 ծանօթութեամբք :
 Մեկնութիւն թղթոյն Եփեսացւոց :
 Մեկնութիւն Յայտնութեան Յով-
 հաննու աւետարանչի , 'ի Ներսէ-
 սէ Լամբրոսացւոյ :
 Միխայելի Ասորոց ժամանակագ-
 րութիւն :
 — Նոյն՝ հանգերձ ծանօթութեամբք .
 Բ . Գրք :
 Յովհաննէս կաթողիկոս , Պատմու-
 թիւն Հայոց , Նոր Գրք :
 Յովսէփ գեղեցիկ :
 Նարեկ :
 Նոր ընթերցարան :
 Նոր կտակարան :

Ողբերգութիւն 'ի մեծն Ներսէս :
 Ուխտ հայրենասիրի . Բ . Գրք 1874 :
 Ուսումն բարոց . թարգմանեալ
 յատալական լեզուէ * :
 Ուսումն տրամաբանութեան թարգ-
 մանեալ 'ի Գաղ . լեզուէ :
 Պատմութիւն Եկեղեցական :
 Պատմութիւն Ս . Գրոց , աշխարհիկ
 լեզուաւ դպրատան տղոց համար :
 Պատմութիւն Ս . Երուսաղէմի :
 Պատմութիւն Ս . Լուսաւորչի Տաճ-
 կերէն :
 Պատմութիւն Հայոց համառօտ ,
 դպրատան տղոց համար :
 Պատմութիւն ճանապարհորդութեան
 'ի Հասկէշոտան , երկու հատոր :
 — Նոյնին Գաղղիերէնը :
 Պատմութիւն Նոր կտակարանի ,
 բարոյական յորդորակներով :
 Սաղմոս : Միջոց :
 Սաղմոս , Խորագիր :
 Սաղմոս , Մեծագիր :
 Սաղմոս , Փոքրագիր :

Սաղմս, Ժողի ճպեալ 1874 :

Սխոն տարեկան կազմեալ 1866 ԹԸ-
ւականէն մինչեւ 1872 :

Ստորագրութիւն Երուսաղէմի ըս-
տառած * :

Տանկիլ, տեղագրութիւն Երու-
սաղէմի :

Տարերք իմաստասիրութիւն, Թարգ-
մանեալ Երասրական ըզուէ * :

Տեսչութիւն հոյուական :

Տրամաբանութիւն, Պատուելի Գը-
րեգորի Փէշոխաճեան * :

Տօնացոյց :

Փոխասաց մանկանց :

Քերական :

Քերական Հայ—Գաղղիերէն :

Քերականութիւն Հայերէն :

Քերականութիւն Գաղղիերէն :

Քրիստոնէական հիմնարկ, Հայե-
րէն և Արարերէն

Օրացոյց Ռ-Արմ. ССР ☆

УМ
1980
МЯСНИКОВА
481126 ИВ.И.

Handwritten mark

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.

2013

0015770

2013

2001

« Ազգային գրադարան



NL0151475

« Ազգային գրադարան



NL0015170

